ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 274

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, 10.06.2008թ.<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՕ-117-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,,ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով,հաշվի առնելով, որ հողատարածքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում,չի հակասում քաղաքաշինական նորմերին,չի առաջացնում սերվիտուտ,հիմք ընդունելով Դսեղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22.04.1991թ. թիվ 6 որոշումից քաղվածքները,ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը /գործ N 176,177,գրանցված է սեղանամատյանում N 2707,2708 և քաղաքացի Սարգիս Պարգևի Խառատյանի դիմումը՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և ճանաչել Սարգիս Պարգևի Խառատյանի /ծնված՝ 10.04.1977թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 56-րդ փողոց 8 հասցեում 06-035-0073-0018 ծածկագրում գտնվող48.20 քմ մակերեսով բնակելի տան,17.80 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի,12.80 քմ մակերեսով բնակելի տան նկուղի,2.40 քմ մակերեսով սանհանգույցի,30.60 քմ մակերեսով անասնաշենքի,6,20 քմ մակերեսով պարսպի և 0,0987 հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ:

2.06-035-0073-0018 ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Դսեղ 56-րդ փողոց, 8 բնակելի տուն>> հասցե:

3.Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:

4.. Բնակելի տունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,կառուցված չէ առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

5. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2025 թ. օգոստոսի 1
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 275-Ա

ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՌԿԱ ՆԱԽԿԻՆՈՒՄ ՏՐՎԱԾ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և հաշվի առնելով Կադաստրի կոմիտեի <<Գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին>> N Կ-16072025-06-0083 որոշումը՝
Որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել կադաստրային գործում առկա և Թումանյանի համայնքապետարանի կողմից 29.05.2025թ. Վարդգես Սերյոժայի Հակոբյանին / ծնված՝ 15.08.1954թ./ տրված Չկալով գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի կողմից հատկացված նախկինում տրված քաղվածքը: Իրավունքի պետական գրանցման համար հիմք ընդունել համայնքի ղեկավարի կողմից հաստատված 09.07.2025թ-ին տրված հողհատկացման ճշտված քաղվածքը:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2025 թ. օգոստոսի 05
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 276-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասի>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՕ 117-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի <<գ>> ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինությունները կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և հիմք ընդունելով «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, Չկալով գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 30.11.1991թ-ի թիվ 7 որոշումից քաղվածքը, ՀՀ Կադաստրի կոմիտեի 16/07/2025թ. <<ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N Կ-16072025-06-0083 որոշումը և Վարդգես Սերյոժայի Հակոբյանի դիմումը՝
Որոշում եմ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի (ծնված՝ 15/08/1954թ.) սեփականության իրավունքը 06-089-0010-0002 կադաստրային ծածկագրում գտնվող 0,22 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա մինչև 2001թ-ը կառուցված 155,0քմ մակերեսով շինությանների նկառմամբ,իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0,00354 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15/08/1954թ./ սեփականության իրավունքը:
2. 06-089-0010-0002 ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,գ.Չկալով,3-րդ փողոց, 16/1 բնակելի տուն>> հասցե:
3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեում:
4. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 10.06.2025թ. N 206-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25 թ. օգոստոսի 05
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 277-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետով, 35-րդ հոդված 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով՝

Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի Դսեղ գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-035-0018-0019 կադաստրային ծածկագրով 0,056803 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2.Սույն հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25 թ. օգոստոսի 05
ք.Թումանյան